ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Իվան Անդրեյի Սեմյանի «Սինտաշտյան և պետրովսկյան բրոնզեդարյան մշակույթների ռազմական գործը փորձարարական հնագիտության լույսի ներքո)» Է 00. 03. «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Իվան Սիմեյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հարավային Անդրուրալի բրոնզե դարի ամենազարմանահրաշ ֆենոմեններից մեկին՝ Սինտաշտայի մշակույթին: Սինտաշտյան մշակութային հանրության ուսումնասիրությունը կարող է լույս սփռել ժամանակակից հնագիտության այնպիսի հուզող թեմաներին ինչպիսիքն են հնագույն միգրացիները, անցումը վաղ պետական կազմավորումներին և այլն:

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է սինտաշտյան մշակույթի միայն մեկ ասպետին՝ ռազմական գործի զարգացմանը: Ներկայացված աշխատանքն իր բնույթով խիստ նորարական է, քանի որ հեղինակը պատմական վերակազմությունների համար օգտագործում է փորձարարական հնագիտության մեթոդները:

Ներկայացված աշխատանքը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, որտեղ հաջորդաբար դիտարկվում են սինտաշտյան և պետրովսկյան մշակույթների ռազմական գործի ուսումնասիրության պատմությունը, սպառազինության, ռազմական տեխնիկայի և ամրաշինության բնութագիրը և տիպաբանությունը, սինտաշտա-պետրովսկյան ավանդույթում ռազմական գործի վերակազմությունը փորձարարական մեթոդներով, վերջաբանից, օգտագործված գրականության ցանկից (հրապարակումներ՝ 474 անվանում, արխիվային փաստաթղթեր՝ 14 միավոր, պետական փաստաթղթեր՝ 3 միավոր), նկարներից (194 նկար) և երեք աղյուսակ – տվյալների շտեմարաններից, որտեղ հաջորդաբար ներկայացվում են սինտաշտյան (81 դամբարան) և պետրովսկյան (33 դամբարան) զենքով թաղումները, ինչպես նաև սինտաշտյան և պետրովսկյան մշակույթների բնակավայրերում հայտնաբերված զենքի նմուշները:

Նախաբանում ներկայացված է աշխատանքի արդիականությունը: Հեղինակն իրավացիորեն նշում է այն մեծ և որոշիչ դերը, որը կատարում էր ռազմական գործը սինտաշտյան և պետրովսկյան հասարակություններում: Այսքանով հանդերձ, հետաքրքիր է այն փաստը, որ պատերազմի հետքերը համալիրներում պրակտիկորեն բացակայում են:

Այնուհետև հեղինակը նշում է հետազոտության նպատակը և խնդիրները. Մասնավորապես՝ արժևորել պատերազմի յուրահատկությունը նախապետական կազմավորումներում, կազմել ռազմական գործի ատրիբուտների նորացված շտեմարան, անցկացնել մի շարք փորձեր և վերակազմել բրոնզե դարի անիվային սպառազինությունը, փորձարարական տվյալների հիման վրա մոդելավորել սինտաշտյան և պետրովսկյան մշակույթների ռազմական գործի տարբեր կողմերը:

Հեղինակը նշում է հետազոտության աղբյուրագիտական հենքը՝ 114 դամբարանից և 22 բնակատեղիից հայտնաբերված զենքի և սպառազինության նմուշները: Այնուհետև հեղինակը նշում է աշխատանքի ժամանակագրական (Ք.ա. XXI-XVIII դ.) և տարածքային սահմանները՝ հարավային Անդրուրալի տափաստանները և անտառատափաստանները, հյուսիսային և կենտրոնական Ղազախստանի տափաստանները:

Կարևոր նշանակություն ունի նախաբանի այն հատվածը, որտեղ հեղինակն անդրադառնում է աշխատանքում արծարծված հիմնական հասկացություններին: Այս հատվածն ունի ինքնուրույն արժեք, քանի որ ներկայացվում է պատերազմի ձևակերպումը, հստակեցվում են «տիպաբանություն» և «դասակարգում» հասկացությունները.

Առաջին գլուխը վերնագրված է «Սինտաշտյան հնությունների ռազմական արվեստի ուսումնասիրության պատմությունը»: Գլխի առաջին ենթագլուխը նվիրված է բրոնզի դարաշրջանում պատերազմի բնորոշմանը: Հեղինակը մանրամասն անդրադառնում է պատերազմի ֆենոմենի ուսումնասիրությանը, նախապետական հասարակություններում պատերազմի յուրահատկություններին: Հեղինակը մանրամասն դիտարկում է հնագիտական, մարդաբանական սկզբնաղբյուրները, համադրելով է խնդրո առարկա տարածաշրջանի և այլ տարածաշրջանների նյութերը:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է ուսումնասիրվող մշակույթների ռազմական ասպեկտի ուսումնասիրության պատմությանը: Առանձին քննության առարկա է դարձել ռազմական էլիտայի ցուցիչների խնդիրը: Չափազանց կարևոր է, որ հեղինակը չսահմանափակվելոց ցուցիչների շարադրմամբ, անդրադարձ է կատարում նաև

հասարակության միլիտարիզացիայի հնարավոր պատճառներին, նշելով միգրացիաները, զինված ջոկատների էքսպեդիցիոն արշավները, տեղական բնակչության հուզումների ճնշումը, մարդկանց, անասունների զինված պաշտպանությունը:

Երրորդ ենթագլուխը նվիրված է սինտաշտա-պետրովսկյան ամրաշինության պատմագրության խնդիրներին: Կարևոր հանգամանք է, որ հեղինակն ուշադրություն է դարձնում ամրաշինության ձևավորմանը որպես համակարգ: Հաջորդ խնդիրը, որին Ի. Սեմյանը բևեռում է իր ուշադրությունը Սինտաշտայի որպես «քաղաքների երկիր» բնորոշմաքն հարցն է: Այս համատեքստում քննարկվում են սինտաշտյան բնակավայրերի գործառույթներին նվիրված խնդիրները սկսած ամրաշինական կենտրոն հանդիսանալուց մինչև ծիսա-պաշտամունքային կամ մետաղագործական կենտրոն լինելը:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Սպառազինության, ռազմական տեխնիկայի և ամրաշինության բնութագրումը և տիպաբանումը»: Հեղինակը բաժանում է ողջ սպառազինությունը երկու մեծ խմբի՝ հարձակվողական և պաշտպանական: Հարձակվողական զենքը դիտարկվում է հետևյալ չափորոշիչներով. ըստ խոցելու տարածության, ըստ կառուցվածքի, ըստ մահաբերության:

Այնուհետև հեղինակը շարադրում է տիպաբանության և դասակարգման սկզբունքները, հաջորդաբար առանձնացնելով դասակարգ (պատրաստման նյութը), բաժին (կրող մասի կառուցվածքը), խումբ (աշխատող հատվածի ուրվագիծը և հատույթը), տիպ (աշխատող հատվածի ձևը և չափերը): Հեղինակն ակնարկում է, որ Յու. Խուդյակովի կողմից առաջարկված այս սանդղակը հաշվի չի առնում ուսումնասիրվող արտեֆակտների հնարավոր այլ գործառույթները, շեշտադրումը կատարելով ռազմական գործառույթի վրա: Թվում է թե տրամաբանական կլիներ, եթե հեղինակը ի սկզբանե բնորոշեր տվյալ իրը (օրինակ՝ նետասլաք կամ տեգի ծայր), սակայն հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ հաճախ միայն փորձարարական մեթոդներով հնարավոր է որոշել արդյոք գործ ունենք նետասլաքի թե տեգի ծայրի հետ, ինչը նշվում է կոնկրետ օրինակներով:

Առաջին հերթին նկարագրվում է մերձավոր մարտի և ձեռնամարտի զենքը: Այնուհետև հեղինակը դիտարկում և տիպաբանում է սինտաշտյան և պետրովսկյան մշակույթների նիզակի ծայրերը: Հաջորդ հատվածում դիտարկվում են ռազմական և կարգավիճակային-ծիսական կացինները. Հեղինակը հատուկ ընդգծում է, որ չի

անդրադառնում պոլիֆունկցիոնալ գտածոներին, ինչպիսիքն են զինվորական ուրագատիպ կացինները: Հաջորդ բաժիններում նկարագրվում են գուրզերը և դաշույններն ու դանակները:

Գլխի երկրորդ հատվածում դիտարկվում է հեռահար մարտի հարձակվողական զենքը. նետ ու աղեղը (նետասլաքները և աղեղները): Երրորդ հատվածը նվիրված է մարտակառքերին և դրանց բաղադրատարրերին: Հեղինակն անդրադառնում է մարտակառքերի առաջացման մասին գոյություն ունեցող տեսակետներին, իրավացիորեն նշելով, որ փորձարարական մեթոդները կարող են մեծապես օժանդակել նախապետական կազմավորումներում մարտակառքերի օգտագործման հետ կապված հարցերի պարզաբանմանը, մասնավորապես հաշվարկելով դրանց պատրաստման համար անհրաժեշտ ժամանակի և աշխատանքային ուժի ծախսը: Կարելի է համաձայնել հեղինակի այն կարծիքին, որ մարտակառքերի հանդես գալը վկայում է էլիտային՝ վերնախավային խավի ձևավորման մասին:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխը նվիրված է սինտաշտյան և պետրովսկյան մշակույթներում ամրաշինական սկզբունքների կիրառմանը: Հեղինակը նկարագրում է ամրացված բնակավայրերը, ի դեպ, հատուկ նշելով, որ սինտաշտյան շերտ չունեցող պետրովսկյան բնակավայրերը ամրացված չեն, փաստ, որ ինքնին խոսում է տարածքի կազմակերպման որոշակի մեթոդաբանության մասին տարբեր ժամանակահատվածներում: Այնուհետև դիտարկվում են առանձին հուշարձաններ. դրանց տեղագրությունը, ճարտարապետությունը, ամրաշինական համակարգերի կառուցվածքը և փոխկապակցվածությունը:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Սինտաշտյան և պետրովսկյան մշակույթների ռազմարվեստի վերակազմությունը հնագիտական գիտափորձի օգնությամբ» լիովին օրիգինալ է, խարսխված է հեղինակի բազմամյա հետազոտությունների վրա և ունի ինչպես կոնկրետ նշանակություն խնդրո առարկա մշակույթների ռազմարվեստի վերակազմության, այլև մեթոդական նշանակություն նախապետական և վաղագույն պետական կազմավորումներում միլիտարիզացվածության և հարակից խնդիրների ուսումնասիրության համար: Հեղինակն ընդգծում է փորձարարական հնագիտության այն հիմնական սկզբունքները, որոնցով առաջնորդվում է գիտափորձն անցկացնելիս. նույնանման նյութի օգտագործում, նույնանման տեխնիկական հնարքների օգտագործում, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում միայն այն դեպքում, երբ դրանք չեն կարող

ազդել գիտափորձի մաքրության վրա: Այս եղանակով վերակազմվում են սինտաշտյան աղեղը, կապարճը և նետերը, մարտակառքի օգտագործման հետ կապված համալիրները. զինվորի հանդերձանքը և սպառազինությունը: Կատարելով գիտափորձը հեղինակն իր առջև դնում է մի շարք խնդիրներ, որոնք թույլ են տալիս ընկալել աշխատանքը, որպես հնագիտական հետազոտություն: Նախ որպես օժանդակ նյութ օգտագործվում են արդեն հայտնի տվյալները, ինչպես նաև տեսական վերակազմությունները, վերակազմվում է ոչ միայն վերջնական արտադրանքը, այլև բուն գործընթացը: Հեղինակն անդրադարձ է կատարում նաև ամրաշինական համակարգերի վերակազմությանը, ներկայացնելով ամրացված բնակավայրերի տեղն ու դերը սինտաշտյան հասարակությունում:

Հետազոտությունն ինքնին կրում է միջմասնագիտական բնույթ. հաշվի են առնվում հնամարդաբանական, հետքաբանական տվյալները, վերլուծության համար օգտագործվում են ճշգրիտ գիտությունների մասնավորապես մաթեմատիկական մոդելավորման մեթոդները. Ստացված տվյալները հեղինակն օգտագործում է սինտաշտյան հասարակության կառուցվածքին, աշխատանքի կազմակերպմանը, կենցաղին և սովորություններին առնչվող բազմաթիվ խնդիրների պատմական վերակազմության հանար, վերածելով գիտափորձի արդյունքը հնագիտական և պատմական սկզբնաղբյուր:

Եզրակացությունների բաժնում հեղինակն ամփոփում է հետազոտության արդյունքները: Մասնավորապես սինտաշտյան ֆենոմենի առաջացումը, սինտաշտյան հանրության միլիտարիզացվածությունը կապվում է հնդեվրոպական միգրացիայի և նոր տարածքները յուրացնելու անհրաժեշտության հետ: Իրավացիորեն նշվում է, որ այս գործընթացներում կարևորվում էին առաջնորդների հենց զինվորական գործառույթները:

Նշելով սինտաշտյան և պետրովսկյան հնությունների որոշակի տարբերությունները հեղինակն իրավացիորեն ընդգծում է դրանց ոչ սկզբունքային բնույթը:

Հետաքրքիր է հեղինակի այն եզրակացությունը, որ զարգացման ուրբանիստական ուղին չէր կարող իրականացվել տափաստանային տեղանքի պայմաններում, ինչը պարզ է դառնում 100-150 տարի անց կապված բնակչության թվի աճի և նստակյաց անասնապահության պայմաններում տափաստանի ամլացման հետ: Հենց այս գործընթացների հետ է հեղինակը կապում բաց բնակավայրերի ի հայտ գալը

պետրովսկյան մշակույթում, սինտաշտյան բնակավայրերում ամրաշինական համակարգերի ավերումը:

Գիտափորձի արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս գնահատել զարգացած ռազմականացված հասարակության կայացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսի օգտագործումը: Հեղինակը հանգում է նաև այն եզրակացության, որ վերնախավին հաջողվել է մոնոպոլիզացնել մասնագիտացված սպառազինության հասանելիությունը դրանով իսկ լիցքաթափելով իրավիճակը, չեզոքացնելով լարվածությունը, որը բնական կլիներ հասարակության լայն շրջանակներում բարձր մահաբերության զենքի կենտրոնացման պայմաններում: Միևնույն ժամանակ, բնակավայրերում մարդկանց և անասունի, ինչպես նաև մետաղագործության կենտրոնացումը հանգեցնում է բնական ռեսուրսների արագ սպառմանը:

Աշխատանքում զետեղված գրականության ցանկը բազմաբնույթ է մասնագիտական տեսակետից և համահունչ է շարադրանքին: Հավելվածները (նկարները և աղյուսակները) լրվին արտացոլում են աշխատանքի բովանդակությունը:

Գիտական խորհրդի դատին ներկայացված Իվան Սեմյանի թեկնածուական ատենախոսությունն աչքի է ընկնում օգտագործող մեթոդների նորարարությամբ, ինչն արդիական է դարձնում այն ոչ մայն սինտաշտյան ֆենոմենի ուսումնասիրության գործում, այլև ընդհանրապես նախապետական և վաղ պետական կազմավորումների հետազոտության համար: Փորձարարական հնագիտությանը նվիրված աշխատանքի առանձին հատվածները ինքնին արժեք են ներկայացնում և կարող են հետագայում օգտագործվել որպես դիդակտիկ նյութ ուսումնական գործընթացում:

Միևնույն ժամանակ, կցանկանայինք ներկայացնել մի քանի դիտարկում: Նախ, հեղինակը մեր կարծիքով չափազանցված մոտեցում է որդեգրում, նշելով, որ հետագա դաշտային հետազոտությունները չեն կարող զգալիորեն ընդլայնել մեր տեղեկատվական հենքը: Հայտնի է, որ նորագույն մեթոդներով նույնիսկ արդեն պեղված հուշարձանների ուսումնասիրությունը զգալիորեն ընդլայնում է մեր գիտելիքները: Իրավացիորեն գնահատելով սինտաշտյան մշակույթը որպես համալիր հասարակության օրինակ, հեղինակը կարող էր ներկայացնել վերջաբանում այն չափանիշները, որոնք թույլ են տալիս կամ թույլ չեն տալիս դասել սինտաշտյան հասարակությունը համալիր հասարակությունների թվին:

Հեղինակը հիշատակում է սինտաշտյան տիրույթը որպես «քաղաքների երկիր» թեզի մասին, նշելով, որ այն բազմիցս քննադատվել է: Թերևս այս համատեքստում կարելի էր հիշատակել մշակույթի շրջանակներում կվազիքաղաքային մշակույթի ձևավորման մասին Դ. Զդանովիչի թեզը, մանավանդ, որ վերջինս օգտագործում է Յու. Անդրեևի տեսական դրույթները Էգեյան աշխարհի վերաբերյալ, որի հետ զուգահեռներ է անցկացնում նաև հեղինակը:

Գնահատելով հեղինակի կողմից օգտագործվող տիպաբանական սանդղակը կցանկանայինք, որ հետագա աշխատություններում հաշվի առնվեին նաև ռուսալեզու գրականությունում ներկայացված զենքի և սպառազինության դասակարգման այլ մոդելները, մասնավորապես Ստեփան Եսայանի աշխատություններում օգտագործվող մեթոդաբանությունը: Տեսական հարցերին են նվիրված նաև Ս. Մանդրիկյանի որոշ դրույթներ:

Նշվածն ամենևին չի ստվերում հեղինակի կատարած ահռելի պրակտիկ և տեսական աշխատանքը: Ճիշտ հակառակը. նորագույն մեթոդների կիրառումը ընդլայնում է հետազոտության հորիզոնները, բացելով վերակամությունների և մեկնաբանությունների նոր ասպարեզ: Աշխատանքը մի կողմից նորարար է, մյուս կողմից՝ հեղինակը լիարժեքորեն օգտագործում է ողջ գիտական տեղեկատվությունը, արդյունքում կատարելով հավաստի և ճշտգրիտ վերակազմություններ:

Ելնելով վերոգրյալից՝ որպես պաշտոնական ընդդիմախոս միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի հնագիտություն և ազգագրություն 007 մասնագիտական խորհրդին շնորհել ատենախոսության հեղինակին հայցվող պատմական գիտությունների թեկնածուի գիտական կոչումը է. 00. 03 «հնագիտություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,

պ.գ.թ., դոց.՝ Ա. Վ. Գնունի

Պ.գ. թ., դոց. Ա. Վ. Գնունու ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, բ.գ.թ. Մ.Վ. Հովհաննիսյան

16. 12. 2024 թ.